ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին

ԵԴ2/2827/02/24 ք. Երևան
18 Ապրիլի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր դատավոր **Ա. Թումասյանը** (այսուհետ նաև՝ Դատարան), քննության առնելով «ՏՈՉԻԿՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՄՈՆՏԱԺ» ԲԲ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ Հայկական ատոմային Էլեկտրակայան ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող), ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ ՍՊԸ-ի՝ ՀԱԷԿ ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ՝ «ՏՈՉԻԿՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՄՈՆՏԱԺ» ԲԲԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) և որպես հետևանք՝ թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «ՏՈՉԻԿՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՄՈՆՏԱԺ» ԲԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

«ՏՈՉԻԿՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՄՈՆՏԱԺ» ԲԲ ընկերության ներկայացուցիչ Լևոն Օհանյանը 15.04.2024 թվականին էլեկտրոնային եղանակով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ Հայկական ատոմային Էլեկտրակայան ՓԲԸ-ի, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ ՍՊԸ-ի՝ ՀԱԷԿ ՓԲԸ-ի կարիքների համար

հայտարարված թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱԾՁԲ-1/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ՝ «ՏՈՉԻԿՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՄՈՆՏԱԺ» ԲԲԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) և որպես հետևանք՝ թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱԾՁԲ-1/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «ՏՈՉԻԿՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՄՈՆՏԱԺ» ԲԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Հայցադիմումը և կից փաստաթղթերը դատավոր Ա.Թումասյանի աշխատակազմին «cabinet.court.am» էլեկտրոնային համակարգում հասանելի է դարձել 16.04.2024 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի համաձայն՝

1. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

…,

5. Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-122-րդ հոդվածներով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր, հետևաբար այն պետք է ընդունել վարույթ՝ որոշումն անհապաղ ուղարկելով լիազորված մարմնին՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «ՏՈՉԻԿՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՄՈՆՏԱԺ» ԲԲ ընկերության հայցադիմումն ընդդեմ Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ-ի, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ ՍՊԸ-ի՝ ՀԱԷԿ ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ՝ «ՏՈՉԻԿՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՄՈՆՏԱԺ» ԲԲԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) և որպես հետևանք՝ թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «ՏՈՉԻԿՀԻԴՐՈԷԼԵԿՏՐՈՄՈՆՏԱԺ» ԲԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2. Գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով՝ դատական ակտի հրապարակման օր սահմանելով 2024 թվականի հունիսի 5-ը՝ դատական իշխանության պաշտոնական կայքի (www.datalex.am) միջոցով:
3. Որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել գործին մասնակցող անձանց:
4. Որոշումն անհապաղ ուղարկել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ secretariat@minfin.am:
5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Արմինե Թումասյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am

Digitally signed by
ARMINE TUMASYAN 7111860578
Date: 2024.04.18 11:13:14